

ԼԵՋՎԻ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅ ՔԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ

Բաճաթի. գիտ. դպրոց Ա. Ն. ԵՐԶԵՆԿԱՆՆԵՐԻ-ՍՐԱՊՅԱՆ

Հայ քերականներից գրեթե բոլորն¹ անդրադարձել են լեզվի ու գրի առաջացմանն ըստ աստվածաշնչային պատումի. այսինքն՝ Ադամի ստեղծումից իսկ սկսած: Ըստ այսմ ձևավորվում է հետևյալ ընդհանրացված հայացքը. լեզուն և լեզվի հարցերը ծնվում են հենց այն ժամանակներից, երբ մարդն ստացավ բանականության շնորհը: Այդ «մեծ և անհամեմատ աստուածային պարգևը» տրվեց Ադամին և նա սկսեց անվանադրել բոլոր կենդանի ու անկենդան բնությունը, իրերն ու երևույթները՝ բոլոր արարածներին՝ «ըստ բարոյից և տեսակին զանազանութեան, վասն զի պարտ էր ամենայն իրի բացերևակիլ և անուամբ»²:

Հենվելով Նդիշի «Արարածոց մեկնութեան» և Փիլոն Աղեքսանդրացու հայացքների վրա, Վարդան Արևելցին այսպես է մանրամասնում առաջին լեզվի ստեղծումը. «Ամենայն շնչոյ կենդանւոյ զինչ և անուանեաց Ադամ, այն անուն է նորա, զի ո՛չ անդէպս ինչ կոչեաց, այդ զյարմարն և զնմանն...: Յայտ է, թէ անշնչիցն ևս կոչեաց անուանս, այդ զնոցայն լոեաց, զի դիւրին էր, վասն հաստատ կալոյն և անշարժ, և չէր կարի գովութիւն կոչողին, իսկ կենդանեացն յոյժ դժուարին, վասն ախտից և բարոյից զանազանութեան և տեղափոխութեան, զորոց զկոշմանն գովութիւն ի կիր առեալ ասէ. Եւ կոչեաց Ադամ անուանս ամենայն անասնոց և ամենայն զազանաց և ամենայն թռչնոց...: Կոչեաց, ասէ, Ադամ անուանս յիրէն, ի գործոյն, ի ձայնէն, քանզի յերիցս աստի դնին անուանք կացեալ ի հանդիսի»³: Այս ամենով Ադամը դառնում է արարչության կցորդ, «որպէս ի դիրս անուանց յարարելոցն յինքնէ» (Երզ. 88): Ադամի թողը՝ Սեթի որդի Ծնովսը, շարունակելով իր պապի գործը, անվանադրում է նաև տիեզերական մարմինները: Այն հարցին, թե «Ի՞նչ կա յարկաւոր յաշխարհի», Արևելցին պատասխանում է. «Անունն, զի Աստուած անգամ նոյնա գտաք և պաշտեմք»⁴: Այսպիսով, ստեղծվում է առաջին լեզուն, որ ամբողջ աշխարհի մարդկության համար միասնական էր. «ա՛զգ մե և լեզո՛ւ մի» (1267, 48ա):

¹ Մեր բուն խնդիրն է ի մի բերել քերականության հայ մեկնիչների արժարժած մի քանի առանցքային հարցեր, որ իրենց այժմեականությունը չեն կորցրել և այսօր, այլև պետք են ապագայում: Սրա հիմքում ընկած է այն գիտական մոտեցումը, որ ցուցարկում են հեղինակները՝ նյութի ընդգրկման ու քննության սահմաններում: Մեջբերումները կատարվում են տարբեր քերականներից՝ ընտրությամբ. բերվում են համեմատարար ցայտուն օրինակներ, որ չեն բացասում հարցի արժարժումը մյուս մեկնիչների գործերում ևս:

² Հոմերոսն էս Երզնկացի. Հաւաքումն մեկնութեան քերականի. Լոս Անջելես, 1983, էջ 88: Այսուհետև էջերը կնշվեն տեքստում, փակագծի մեջ:

³ Նախադրությունն ծնողոց մեկնութեան սրբոյ հարն Վարդանայ, առ խնդրոզսն մատենիս. Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձև. № 1267 (XIV դար), էջ 26ր: Այսուհետև էջերը կնշվեն տեքստում: Վարդան Արևելցուց օգտագործել ենք ինչպես «Արարածոց մեկնութիւնը», այնպես էլ «Ժղլանք»-ն ու Տիեզերական պատմությունը, որոնց մեջ մեզ հետաքրքրող հարցերն առավել հանգամանորեն են արժարժված, քան Քերականության մեկնության մեջ:

⁴ Վարդան Արևելցի. Ժղլանք. ՄՄ, ձև. № 2544 (XIV դար), էջ 127ա: «Ժղլանք» անունով հայտնի այս աշխատությունը, որ ըստ էության հանրագիտարանային բնույթ ունեցող ուսումնական արժեքավոր ձեռնարկ է, ունի հետևյալ վերնագիրը. «Լուծմունք ի սուրբ գրոց Վարդանայ վարդապետի, ի խնդրոյ րարէպաշտ թազաւորին Հայոց»: Այսուհետև էջերը կնշվեն տեքստում:

Ըստ քերականների, լեզվի ծագման կամ խոսելու սուր պահանջ առաջացավ այն ժամանակ, երբ մարդիկ սկսեցին ճանաչել աշխարհը և կարիք զգացին հաղորդակցվել միմյանց հետ, իրազեկ դարձնել իմացածին, որին նախ հասան իրերն ու երևույթներն անվանադրելու և բացորոշելու միջոցով: Առաջին լեզվին հատկացնելով հասարակական մեծ դեր, հայ քերականները փորձում են բացատրել միալեզվության կարևորությունն ու խորհուրդը: Ըստ նրանց, Աստված «շնորհեաց խաւսս բանականաց առաջին ազգի մարդկան, որպէսզի միաւորութիւն սիրո կալցին առ միմեանս...», իբրև անդամք բազումք առ գլուխ մի» (Ծրգ. 90):

Սակայն ո՞րն էր այդ առաջին լեզուն կամ նախալեզուն՝ ըստ քերականների: Ավանդության համաձայն, ջրհեղեղից հետո, Ադամի լեզուն կարողանում է պահպանել միայն Եբերը՝ հրեաների նահապետը, որի անունով էլ նրանց լեզուն կոչվում է եբրայերեն, իսկ իրենք՝ եբրայեցիք: Հայ մեկնիչները փորձում են «ստուգել» այն՝ հարցին մոտենալ քննական հայացքով: Ըստ այսմ, ոմանք այդ լեզուն համարում են ոչ թե եբրայերենը, այլ ասորերենը, ուրիշները՝ քաղդեերենը: «Իսկ թէ ո՞ր է լեզուն, յորմէ բաժանեցան: Քաղդեացին է, որ մնաց առ Եբեր, որպէս և արդ գտանին առ նոսա անուանք նահապետացն՝ Ադամ, Սէթ, Ենոքս, որ մերձ են յասորին և ոչ հեռի...», և այնպէս մոռացան զառաջինն...» (1267, 48ա)⁵: Հայտնում են նաև այն կարծիքը, թե իսրայելացիք, ծովն անցնելուց հետո, մոռանում են «զեգիպտացի» լեզուն, հայրենին արդեն մոռացած լինելով Եգիպտոսում, որով և «բարձաւ Ադամայն, զոր այժմ ունին ասորիք և թէ քաղդէացիք» (Ծրգ. 91): Մի այլ լրում է անում Առաքել Սյունեցին, որ մասամբ արտահայտում են նախորդները նս: Երբ եբրայեցիք անցան ծովը,— ասում է նա,— դարձյալ նորոգեցին գիրն ու լեզուն, որ մոռացել էին Եգիպտոսում, «ըստ այսմ, թէ լեզու, զոր ոչ գիտէր, լուաւ. այսինքն՝ կամ զհինն զոր մոռացեալ էին, նո՞ր լուան, և կամ Մովսէս նոր գիր սահմանեաց նոցա, և կամ որպէս զաւրէնս նոր ետ նոցա Աստուած, այսպէս և գիրն»⁶: Վարդան Արեւելցին, այնուամենայնիվ, կարծում է, որ այն նոր լեզուն «զոր առին» եբրայեցիք, նման էր հայրենի լեզվին (1267, 122բ): «Եւ ին յԵգիպտոսէ ի հինգ շաբաթոջ և անցին ընդ ծովըն ի կիրակէի...», առին նոր լեզուն՝ մոռանալով զԵգիպտոսին, զի զհայրենին յԵգիպտոս էին մոռացեալ: Եւ լեզուն, զոր առին, նման էր հայրենի լեզուին. և աստ կոչեցան եբրայեցիք, որ թարգմանի անցիք: Եւ եթէ յԵգիպտոս եբրայեցիք կոչէ գիրն՝ ի դիմաց Մովսէսի և Իսրաիլի, վասնզի յետոյ գրեցաւ գիրքս այս յանապատին, յորում կոչեցեալ էին, ... և անցեալ ընդ ծովն յայնժամ երգեաց Մովսէս, և որդիքն Իսրաիլի, զաւրհնութիւնս զայս նոր լեզուան...» (1267, 122բ—123ա):

Արեւելցին նախամայր լեզուն բաժանված է համարում ըստ տանուտերերի քանակի, սակայն, ի տարբերություն 72-ի, նա ընդունում է 73-ը, Եբերին առանձնացնելով նրանցից, որովհետև «ասեն թէ՝ Ոմն իշխան, ի տանէն Սեմայ, Եբեր անուն, յմիաբանեաց ընդ նոսա, և չէ՛ր անդ» (2544, 167ա—բ): Ըստ այսմ, նա բերեց «ղխաւսն առաջին» (2544, 167բ): Ի հաստատումն այս մտքի նա վկայակոչում է և մի այլ զրույց. «Գիր կայր քաղդեացի ի նշանագրացն Ենոքսայ, շինած առաջին լեզուան: Յետ խառնակման լեզուացն՝ չկարէին կարդալ: Ապա զնա (Եբերին—Ա. Ս.) ձայնեցին և կարդաց: Եւ իմացան, թէ սա՛ ունի զառաջին լեզուն: Բայց ասեն, թէ յետոյ այն ա՛յլ կորաւ, միայն գրո՛ւ ունին և չկարեն հաւասարապէս վարել զառաջին լեզուն ջհտին: Թէ իրաւ է, չգիտեմ» (2544, 167բ): Այսպիսով, Ադամի լեզուն ոմանք պահպանված են համարում եբրայերենի, ոմանք՝ ասորերենի կամ քաղդեերենի մեջ, ավելի հավանական վարկանելով առաջինը, թեև այն ևս ենթադրում են մոռացված:

⁵ Վարդան Արեւելցին աղբյուր է նշում Եղիշեի Արարածոց մեկնությունը:

⁶ Առաքել Սյունեցի. Յաղագս քերականութեան, համառոտ լուծմունք. Լոս Անջելես, 1982, էջ 70: Այսուհետև էջերը կնշվեն տեքստում:

Իսկ ինչպե՞ս և ինչո՞ւ խախտվեցին միալեզվության հիմքերը և ինչո՞ւ կամ ինչպե՞ս առաջացավ բազմալեզվություն:

Ըստ Աստվածաշնչի, մարդիկ մեծամտանալով, փորձեցին հասնել Եստ-ծուն և կառուցեցին այնպիսի աշտարակ, որ երկինք հասնի: Սա շարժեց արարչի զայրույթը, նա կործանեց աշտարակը, խառնեց լեզուն այնպես, որ այլևս չկարողանան հասկանալ միմյանց: Այսպիսով, առաջացան տարբեր լեզուներ կամ բազմալեզվություն: Մինչդեռ միալեզվության հիմքերն, ըստ հայ մեկնիչների, արդեն իսկ խախտվել էին ո՛չ թե աշտարակաշինության ժամանակ, կամ նրանից առաջ, այլ ավելի վաղ՝ ջրհեղեղից էլ առաջ: Ադամի լեզվի մեջ առաջացել էին տեսակ-տեսակ թերություններ, կապված արտաբերական գործարանների պակասավորության հետ: Սրա հետևանքով լեզուն աղճատվում էր և աղավաղվում, բառերը տարբեր կերպ էին արտասանվում ու հնչում և չէին հասկացվում:

Լեզվի մաքրությունն ու ուղղախոսությունը դժվար էր դառնում. պահպանել նաև ա՛յն պատճառով, որ ուսուցանվում էր ավանդաբար, երկարակյացների միջոցով միայն: Ուստի, հետագա սերունդները ձգտում են խառնից բանից ստուգապէս՝ ճշմարտության: Այս գործում առանձնապէս նախանձախնդիր է դառնում Ադամի թոռը՝ Սեթի որդի Ենոքը: «ՁԵՆՈՎԱՆ նա գիր ստեղծեց, քերականները պատասխանում են որոշակի. «ՁԵՆՈՎԱՆ նա արար գիր, և դանուանս մասանց արարածոց՝ զոր կոչեալ էր Ադամայ, գրեա՛ց, զի սկսեալ էր այլայլի և խախտիլ ի գնչու և ի լեզուստ և յատմանա՛ւ և ի շրթնատ մարդկանէ» (1267, 36բ): Այս շեղումները շարունակվում ու ավելի էին խորանում հետագայում, աշտարակաշինությունից հետո ևս, քանի որ Ենոքի գրերը չէին հարմարվում նոր առաջացած լեզուներին, և ուղղախոսությունը դարձյալ սովորեցվում էր ավանդաբար:

Նույն վիճակն էր տիրում և հայ իրականության մեջ: Բացատրելու համար, թե ինչո՞ւ են շատ հայոց բարբառները, և դրա ակունքները տեսնելով հազարամյակների հնության մեջ՝ պատմության խորքերում, Առաքել Սյունեցին գրում է. «Եւ թէ վասն է՛ր ոչ միաբան հայոց լեզուն, այլ զանազան, ա՛յս է. զի յետ Աշտարակին, յորժամ եկն Հայկ դարձեալ և ուսոյց ընկալեալ լեզուն, յետ ուսմանն թեքեցան ուսեալքն, մի քան զմի թիրեցին զբառերն, այսինքն՝ որպէս վերջին ուսեալքն, քան զառաջինքն՝ յետին գտան» (81—82)՝:

Այս հարցին ավելի հանգամանորեն են անդրադառնում Հովհաննէս Երզնկացի-Մործորեցին և Դավիթ Զեյթունցին: Այսպես, օրինակ, Կորճաջի բարբառն ու նրա «թիրութեան» արմատները հետևյալ մանրակրկիտ բացատրությունն են ստանում նրանց աշխատություններում. «Գորդա կոչէ զԿորճայ լեզուն, զոր ի յունին Դորացի անուանեն լեզու, իսկ զաղափար սորին յստակ է. այս Մանայճ կամ թէ զքաջացն որդիք այդուիկ անուանեն ածանցականիւ, կամ թէ ծեքելով ի հոմանուն լեզուէ ի խօսս, և փոխանակ Մանէճ ասելոյ՝ Մանայճ կոչեն (Մործ. 48ր), այսինքն՝ ծոեն զլեզուսն ի հասարակաց խօսիցն և ի Մանէճ ասելոյ տեղն Մանայճ ասեն: ...Գորդայճ... Կորճայճ են (Զեյթ. 110): Եւ է սա գաւառ, որ յելից կա Մոկաց՝ առ Ասորեստանիւ, ընդ ստորոտով Կորգուաց լերինն, և ձգտի մինչև ի Փոքր Ախրակ. այսինքն՝ ի Մոկաց բռնէ և երթայ մինչ ի յԱսորեստան՝ Գորդաց լերինն Եթեկովն: Ամենայն բնակիչք տեղւոյն Գորդայճ կոչին անուամբ լերինն: Եւ սոցա լեզուս կարի թիրեալ լինի ի հայկազանցս, վասն մերձ գոլոյն մարաց և ասորաց»⁷, «զոր աստ լերինն անուամբն գաւառն Գորդայ անուանէ, որք ասին Կորճայք»⁸:

⁷ Այստեղ ուշադրով է գլորժամ եկն Հայկ դարձեալ՝ արտահայտությունը:

⁸ Դավիթ Զեյթունցի. Մեկնութիւն քերականի. Երևան, 1981, էջ 110: Ասուհետև էջերը կնշվեն տեքստում:

⁹ Նուստով վարդապետի Յոհանիսի Երզնկեցոյ, որ և Մործորեցի, արարեալ համառօտ տեսություն քերականի. ՄՄ, ձեռ. № 2326 (XIV դար), էջ 48ր: Այսուհետև էջերը կնշվեն տեքստում:

Հովհաննես Երզնկացին ևս անդրադառնալով այս հարցին, գրում է. «Ստուգաբանությունն պիտանացու եղև լազազս ուղղութեան անուանց և բայից. վասն զի յանմտութենէ խաւսից թիւրեալ են անուանք և բայք ամենից ազգաց, բացի սակաւուց: Եւ արինակ թիւրութեան է այս. որպէս ճանապարհի կտրելն և խորանալն ի կոխմանէ ոտից և կամ որպէս սանդղամատանց թիւրիլ և թափիլ և ջարդիլ ի բազմութենէ երթեակացն. ըստ այսմ արինակի լազումս ընդ ինքեանս անցուցանելով բանիս՝ ի բաժանմանէ լեզուացն մինչև ցայսար թիւրեցան անուանք և բայք ամենից ազգաց, բացի սակաւուց ազգաց, որք ունաւոր արուեստիս այսմիկ յոլովք և անսպառ լեալք, պահեցին ամբողջ և ուղիղ զխաւսս ազգաց իւրեանց, հրամանաւ թագաւորաց իւրեանց: Եւ եղև թիւրութիւն խաւսից այսպէս. գնչուք և թոթովատք եղեալ լազգէն, որ յառաջ բան զմեզ, որք ո՛չ կարէին զընտրութիւն առնել լծորդացն ի խաւսս իւրեանց, լազազս մերձաւորութեան լծորդացն առ միմեանս, որպէս բնէ՝ մեներ, պէի և փիւրի, և որք մի ըստ միոջէքն, աւանդեցաւ թիւրութիւն խաւսից նոյա որդոց իւրեանց, որպէս զուղղութիւն լազազս միա՛յն բնակելոյն և ոչ ումեք զոլոյ մերձաւոր առ նոսա: Եւ էին նոքա նահապետք իւրաքանչիւր գաւառաց, յորժամ էին տակաւին նուազութիւն մարդկան: Իսկ սովորութիւնն վարժեալ պահեցաւ՝ իբրև զարէնս յիւրաքանչիւր գաւառի, և եղեալ անուանակոչութիւն անմարմնոց և մարմնոց, աճականաց և անաճից. լազազս այնորիկ հարկ ևղև ստուգաբանելով ուղղել զթիւրութիւնն»¹⁰:

Այսպիսով, բերականները բազմալեզվութեան արմատները տեսնում են նախալեզվի զարգացման բուն ընթացքի մեջ:

Կարևոր է նկատել լեզվագիտական և մի ա՛յլ ուշագրավ հետեւություն: Ըստ բերականների, աշտարակաշինությունից հետո միասնական լեզուն ո՛չ թե խառնվեց ու խառնակվեց այնպես, որ չկարողանան միմյանց հասկանալ, այլ բաժանվեց առանձին և ուրույն լեզուների, և յուրաքանչյուրն ստացավ իրեն բնորոշ առանձնահատկություն ու գեղեցկություն: Այս մասին մասնավորապես շեշտում է Վարդան Արեւելցին. «Եւ այն էին սքանչելիք, զի ո՛չ խառնակ և շփոթ և ըստ դիպուածոյ խաւսէին, այլ իւրեանք շինաւորքն, և իւրեանց ճորտքն, և այն ազգն, որ ի յաշխարհն իւրեանց էին, ամէնն առանձինն յատու՛կ առին խաւսս...» (2544, 167 ա), «Եւ ամէնն, որպէս անբան եղեալ, առանձնացան իւրեանց ազգաւն և ապա սկսան խաւսել ամէն ազգ առանձինն» (2544, 167 ա): Այսինքն՝ խոսեցին այնպես, կարծես նո՛ր էր տրված նրանց լեզու, իսկ մինչ այդ ոչ լեզու էին ունեցել, ոչ խոսք՝ «անբան» էին եղել:

Լեզուների բաժանման ու տարբերութեան մեջ գեղեցկություն և օգտակարություն տեսնելու այս գաղափարն ընդունում են հարցին անդրադարձող բոլոր բերականներն ու մեկնիչները, V դարից սկսած, դրան տալով հետեւյալ բացատրությունը. «Եւ զի թէպէտ պատուհաս էր լանցաւորացն, այլ զի գործ Աստուծոյ էր, գեղեցկութիւն եղև բանականութեանս՝ խառնելով բազում ազգաց բան և բառ և անուն առ միմեանս, ի մի խոշոր լեզուէն, ի յոլովս և ի զանազան զարուկութիւնս որոշեալ. փափկախաւս հելլէնն, սաստիկ հռոմայեցին, սպառնական հոնին, աղաչական ասորին, պերճական պարսիկն, գեղազարդ ալանն, ծաղրական գուդն, խափարաձայն եգիպտացին, ճճուողական շնդիկն, համեղական (և ամենազարդ)»¹¹ հայն, այլ և համեմատիչ, զի կարէ զյոլովիցն առ ինքն ամփոփել: Եւ որպէս գոյն առ գոյն պայծառանայ և դէմք ի դիմաց, և հասակ առ հասակաւ և արուէստ յարուեստէ աճէ, և գործ ի գործոյ զարանայ, նոյնպէս և լեզու լեզուաւ գեղեցկանայ, պիտանացու առ ի

¹⁰ Երզնկացին աղբյուր է նշում Մովսես Քերթոզին և Ստեփաննոս Սյունեցուն (տե՛ս էջ. 114): Սրան անդրադարձել են և մյուս բերականները:

¹¹ Մեծին Վարդանայ Բարձրբերդցւոյ (Արեւելցւոյ—Ա. Ս.) Պատմութիւն. տիեզերական. Մոսկվա, 1861, էջ 19: Այսուհետև էջերը կնշվեն տեքստում:

գիւտ ստուգաբանութեան, զի և որ կարի խախտալուր լեզուն է՝ յաւգուտ գտանի» (Երզ. 91)¹²:

Ուրեմն, ըստ հայ մեկնիչների, խառնելն ու խառնակելը նշանակում է, թե «խառն գաանի յազգացդ բառ և բան և անուն» (1267, 48ա): Այս գիտական հիմքի վրա էլ կատարվում է մի այլ ընդհանրացում. լեզուների բաժանմամբ «շատ ինչ բարի եղև. մի՛ զի ծանեան մարդիկ զիւրեանց տկարութիւն, և դարձեալ՝ զի պատճառք իմաստից և գեղեցկութեան» (Պատմ. տիեզ. 18—19), և ապա՝ մի կոշտ՝ «խոշոր» ու «կոպտածև» լեզվից առաջացան տարբեր և յուրաքանչյուրը յուրովի գեղեցիկ լեզուներ:

Լեզուներին տրված այս բնութագիրը նշանակում է, թե հայ մեկնիչները V դարից սկսած, ազգային լեզուների առաջացումը համարում են ոչ թե աստվածային պատիժ կամ պատուհաս, այլ անխուսափելի երևույթ, բարու ու գեղեցիկի սքանչելի ծնունդ, որի արտահայտությունն են և հայերենի բարբառները: Սրանց դերն առանձնապես մեծ է համարվում հայկազյան լեզվի պատմությունն ուսումնասիրելու և տաղաչափությունը հարստացնելու գործում¹³:

* * *

Քերականների այս դատողությունների մեջ նկատելի է և մի այլ կարեւոր եզրահանգում, որ բացահայտում է նրանց անաչառ վերաբերմունքը թե՛ սեփական և թե՛ օտար լեզուների գնահատման հարցում:

Դիտնխիոս Թրակացու քերականության թարգմանիչ Դավիթ Քերականը կտրուկ դնում է մայրենիին և նախնիների պատմությանը քաջատեղյակ լինելու անհրաժեշտությունը: Նա գրում է. «Նաև հարկ է վարդապետին ոչ զաւար ինչ, այլ զիւրոյ լեզուին խաւսս և պատմութիւնս լաւագոյնս համառատապէս գիտել, զի իբրև հարցանիցի՝ դիւրաւ լուիցի» (85): Սակայն, ինչպես և պետք էր սպասել, լեզվի իմացության հարցը ևս չի մնում այս սահմաններում և դառնում է քննության ու նոր մեկնաբանությունների առարկա: Այսպես, Դավթին հաջորդող մեկնիչներից Ստեփաննոս Սյունեցին զարգացնում է այս հայացքը, մանրամասնում Դավթի Քերականության «Լեզուաց և հնազգիտ պատմութեանց առձեռն բացատրութիւն» կոչվող հատվածը և հետևելով կերպ է մեկնում միտքը. «Արդ, լեզուս ասէ, որ շուրջ զբն սահմանակից աշխարհք իցեն, գիտութիւն լեզուաց նոցա, վասնզի կարի աւգտակարք են այսքաւ առ ստուգաբանութիւն: Եւ դարձեալ՝ զքո լեզուիդ գիտելն զրովանդակ զբառսն զեղերականս, որպէս զԿորճայն և զՏայեցին, և զԽութային և զԶորորոյ 2այեցին և զՍպերացին և զՍիւնին և զԱրցախայինն, այլ մի՛ միայն զմիջերկրեայսն և զոստանիկսն, վասն զի պիտանիք այսոքիկ են ի տաղաչափութեան, այլև աւգտակարք ի պատմութիւնսն, զի մի՛ վրիպեսցի՝ անընդել գոլով լեզուացն» (187): Այդպես են մտածում և այլ քերականներ, դրանք թվում նաև Մագիստրոսն¹⁴ ու Պիուզ Հովհաննես Երզնկացին (113):

Այս հայացքը երկկողմանիորեն էլ ավելի բացարձակ է դառնում Առաքել Սյունեցու աշխատության մեջ, ուր ասվում է. «Ոմանք կարծեցին, թէ որ շուրջ զքե աշխարհք իցեն՝ ազգաւ և լեզուաւ աւտար, նոցա՝ լեզուն պարտ է գիտել, այսինքն՝ զՀԲ (72) ազգի լեզուն, քի յոյժ պիտանի է առ ստուգա-

¹² Այս հատվածը գրեթե նույնությամբ բերում են և ուրիշ քերականներ, որ ծագում է Եղիշի մեզ չհասած «Արարածոց մեկնութիւն»-ից: Սա օգտագործում և որպես աղբյուր է ներշնչում Վարդան Արեւելցին (1267, 48 ա): Երզնկացին ևս նշում է. «Եւ Արարածոց մեկնիչ»:

¹³ Ստեփաննոսի Սիւնեցոյ Մեկնութիւն քերականին.— Նիկողայոս Աղոնց. Արուեստ Դիտնխիոս Թրականի և հայ մեկնութիւնք նորին. Պետրոգրադ, 1915, էջ 187: Այսուհետև էջերը կնշվեն տեքստում:

¹⁴ Տե՛ս Դրիգորի Մաժիստոսի և Կիտոնդի, որդւոյ Վասակայ Մարտիրոսի, Մեկնութիւն քերականի, գոր Էդեալ է զայլոց և զիւրոց յաւելուածոց միտս, ձեռ. Մ 3917, ԺԴ, էջ 34ա—34բ: Տե՛ս նաև Ն. Ա. դոնց. նշվ. աշխ., էջ 187:

րանութիւնն, այսինքն՝ զի յամենայն բառէ գոյ ի գրեալսն: Իսկ թէ ոք զամենայն լեզու գիտէ, նայ դիրաւ հասկանայ զամենայն բառ, զի որպէս ի յորդեալ գետն գոն առաւել ջուրք, քան ի սակաւ ծովակ, այսպէս և այս... վասն որոյ պարտ է զամենայն լեզու գիտել, թէ հնար իցէ: Բայց ո՛չ զայս ասէ, այլ զիւր ազգի լեզուն միայն, այսինքն՝ զեղբրականն, որ է Կորճայքն, որ են սասնցիք, և զՏայեցիւն, որ են տարոնացիք և զԽութայիւնն, որ են խութեցիք...» և այլն (81—82):

Դավիթ Քերականի տեսակետն ընդունելով հանդերձ, Առաքել Սյունեցիին ես, ինչպես տեսնում ենք, այն համոզմանն է, թե մայրենիի հետ մեկտեղ պետք է իմանալ նաեւ հարեան ժողովուրդների լեզուները: Նույն կարծիքին է և Երզնկացին, «Վասնզի կարի աւգտակարք են առ ստուգաբանութիւն», «այլ և աւգտակարք ի պատմութիւնսն...», զհին և զնոր, զհեթանոսաց և զհրէից և զքրիստոնէից, զի տեղեակ իցէ և ընդել ամենայն պատմութեանց» (113):

Դործորեցի Հովհաննէս Երզնկացին (22ա) և Եսայի Նչեցին համամիտ չեն հարցի նման դրվածքին: Նրանք մտնում են Դավթի մեկնության սահմաններում միայն¹⁵: Մինչդեռ մյուս քերականներն ունեն այն ճշմարիտ համոզումը, թե օտար լեզուների իմացութիւնը որքան շատ, այնքան ավելի օգտակար է ո՛չ միայն գիտական մտքի խորն ու բազմակողմանի զարգացման համար՝ առհասարակ, այլ և սեփական լեզվի ճանաչման ու հարստացման համար՝ սասնավորապես ստուգաբանութեան միջոցով¹⁶:

Այսպիսով, լեզուն դիտվում է որպէս հոգեւոր հարստութիւն. ոչ թե սոսկ մարդկային պարզունակ հարաբերութիւնների ու հաղորդակցութեան միջոց, այլ ժողովուրդների միջև հասարակական ու գիտական մտքի, նյութական ու հոգեւոր մշակութի փոխըմբռնման, փոխներգործութեան ու հարստացման, որով նաեւ ոչ միայն գաղափարական ու քաղաքական կապերի, այլ և սոցիալ-տնտեսական հարաբերութիւնների զարգացման անհրաժեշտ ու հիմնական գործոն:

Սրանից ելնելով, մեկնիչները պնդում են, թե ո՛չ մի լեզու ավելորդ կամ արհամարհելի չէ, զի «և որ կարի խախտաղուր լեզուն է՝ օգուտ գտանի» (1267, 48ա):

Յուրաքանչյուր ժողովուրդ, որպէս «ազգ մի», պետք է լինի նաեւ «լեզու մի», ունենա «միալեզու հաւակապութիւն», ինչպէս «անդամք բազումք առ գլուխ մի», որպիսզի «զսէրն ազգակցական և զմիալեզու խաւակցութիւնն ի հակառակն» շշռջի:

* * *

Լեզուների զարգացման ու գոյատեւման հաջորդ փուլը սերտորեն կապվում է գրի առաջացման հետ, որին նույնպէս քերականները մեծ տեղ են հատկացնում, ուստի և լեզվի քննութիւնը ձեռնարկում են նրա այդ ամենափոքր մասնիկից՝ տառից և գրից, կամ՝ հնչյունից և գրից սկսած, ամենից առաջ կանգ առնելով այն հարցի վրա, թե ինչո՞ւ ստեղծվեց գիրը, ո՞րն էր նրա առաջացման անհրաժեշտութիւնը:

¹⁵ Եսայի Նչեցի. Վերլուծութիւն քերականութեան. Երևան, 1966, էջ 65: Այսուհետեւ էջերը կնշվեն տեքստում:

¹⁶ Ուշագրավ ու արժեքավոր է այս առումով Նիկողայոս Մառի հայոց լեզվին տված գնահատականը, որ բացահայտում է նրա միջազգային դերը՝ վերահիշյալ տեսանկյունից. «Գիտակցութիւն չկա և այն բանի, թե ի՞նչ առասպելական հորիզոններ են բաց անում մարդկութեան կարեւորագույն հասարակական գործիքի՝ խոսքի վերաբերմամբ այդ զարմանալի ժողովրդի միայն լեզվական հարստութիւնները, և ինչ ահռելի նյութեր ընձեռում սեփական և ուրիշ ազգերի կուլտուրական կապերը և արմատները մերկացնելու համար: «Հոռւմքն առատ, բայց մշակներն բացակա...» Ն. Մ ա ռ. Հայկական մշակութիւնը, նրա արմատները և նախապատմական կապերը ըստ լեզվագիտութեան. 1925 թ. Փարիզում Հայ ուսանողութեան միութեան երեկելութեամբ կարդացած դասախոսութիւնից. տե՛ս «Սովետական Հայաստան» (ամսագիր), 1987, № 9, էջ 26:

Իմացության ու աշխարհաճանաչման իր ժամանակի բարձր մակարդակին հասած մարդկային միտքը մտահոգվում է նաև մոռացումից փրկել այն ամենը, ինչ ձեռք էր բերվել գիտության ու արվեստի տարբեր բնագավառներում. որպեսզի չկորչի կամ չնվազի մարդկությանը տրված բանականության շնորհը: Այդ խնդիրն իրագործողի աննախադեպ մեծ դերն, ըստ ավանդության, ստանձնում է աստվածաշնչային նշանավոր գիտնական ու աստղաբաշխ՝ Սեթի որդի և Ադամի թոռ Ենոփը: Տիեզերագիտության իր հմտությամբ նա կանխատեսել էր, թե մարդկությանն սպառնում է հրով կամ ջրով կործանվելու մեծ աղետ, որ կարող է ոչնչացնել ու իր հետ տանել դարերի ընթացքում աստղծված հոգևոր ու նյութական արժեքները ևս: Զիմանալով, թե աշխարհակործան այդ ուժերից ո՞րն է լինելու առաջինը, Ենոփը պատրաստել է տալիս պղնձե և խեցեե երկու սյուն, որպեսզի «եթէ ջրով ապականի՝ պղինձըն մնացէ և եթէ հրով՝ թրծեալ աղիւսն» (Երզ., 89): Նա դրանց վրա գրում է՝ «զանուանս մասանց արարածոց, զոր կոչեալ էր նախահայրն Ադամ, և զանուանս մոլորակացն, զոր ինքն եղ» (Երզ., 89): Իսկ հետագայում Ենոփը, որ նույնպես աստղաբաշխ էր, այլև տոմարագետ, գրում է նաև նախնիների պատմությունը. «Իսկ յետ սորա՝ եւթներորդն յԱդամայ Ենոփը արարեալ նշանագիրս կարճոտունս և բազմատարս և այնու եթող զկեանս վարուց առաջնոցն: Եւ զիր մարգարէութեանն տեսիլս գրէ և նա նոյնպէս զուղղակի անուանս ի պղինձ և ի խեցի, զի ամբողջ պահեսցին նշանակք անուանց և իրաց և մի պակասեցի նշոյլք բանական շնորհին յազգս բանականաց...: Վասն որոյ յԵնոփսայ և ի սմանէ իմանամբ զսկսեալ զձև նիւթաւոր գծի, որով առաջինքն վարժեցան, մինչև ի ժամանակս համակործան պատուհասին, որ ի ջուրցն հեղեղէ» (Երզ., 89—90):

Ջրհեղեղից հետո Սեթի որդի Արփաքսադը Սիդրոն լեռան վրա գտնում է «պղնձի սիւնն և զխեցիսն, որ ունէին զգիր և զանուն և զգործ ժամանակին...» (Նշ. 56): Ուրեմն, «յԵրեբայ, որ նախաստեղծիցն ունէր զձայն և զգիր, յԵնոփսայ և յԵնոփայ, զոր արարեալ գրեցին ի վերայ պղնձի սեան և թրծեալ աղիւսոյ, և ի ձեռն նոյի և որդւոց նորա, որով վարժեցան, պահեցաւ՝ երկրորդ մարդկութիւնս» (Նշ. 56):

Այսպիսով, գիրը, որպես առաջին նյութեղեն գիծ, ինչպես կուգամ են քերականները, ստեղծեցին Ենոփն ու Ենոփը՝ մարդկության պատմությունը փրկելու. իմաստությունը պահպանելու և հետագա սերունդներին հասցնելու նպատակով:

Երի ստեղծման երկրորդ խնդիրն ուղղախոսություն սերմանելն էր, լեզվի միասնությունը՝ մաքրությունն ու ճշգրտությունը պահպանելը: Այս պահանջն առաջացել էր մասնավորապես աշտարակաշինությունից հետո, երբ լեզուները ոչ միայն բաժանվեցին, այլև խառնակվեցին, պատճառ գառնալով «եզուաց և խաւսից թիրութեան ի գեղեցկաբանութենէ» (Երզ., 94), զի ոչ ունէին գիր ըստ զանազան բաժանեալ լեզուացն, այլ երկարակեցութեամբ զմիմասնս աւանդութեամբ ուսուցանէին ուղղախաւսել» (Երզ., 92):

Ժամանակի ընթացքում պարզվեց նաև, որ Ենոփն ու Ենոփի նշանագրերը չեն համապատասխանում միմյանցից հեռացած ազգային նոր լեզուների օրինաչափություններին: Ուստի և «կամ եղև բազմաց յարմարել գիւտս արուեստի, զի կարասցեն սերմանել զուղղախաւսութիւն» (Երզ., 93): Եվ «յարմարեցին գիրս իւրաքանչիւր ազգի, զոր նախ քաղդեացիքն ձևակերպեցին իւրեանց գիր նշանաւոր, ըստ լեզուին իւրեանց յաւդի, յորոց և յունականքն յարուեստ անկեալ՝ ըստ իւրեանց ձայնի. նմանապէս և այլք յազգաց» (Երզ., 90): Ըստ Վարդան Արեւելցու ունեցած տեղեկությունների, «յետ ջրհեղեղին Արփաքսաթ անտի (ըստ Ենոփի ու Ենոփի գրերի—Ա. Ս.) գիր արար քաղթէացոց և անտի՝ այլք» (2544, 131ա—բ):

Գրի հորինման ու ստեղծողների մասին՝ փոքր-ինչ ավելի սուղ կամ մանրամասն, խոսում են գրեթե բոլոր քերականները:

Այն հարցին, թե «ուստի՞ գտեալ եղև գիր», Մործորեցին պատասխանում է. «նախ յԵնոփսայ և յԵնոփայ սկսեալ, և զայն գտեալ Արփաքսադայ՝ մնաց

առ Երեւր, որպէս լեզուն Աղամա, որով վարժեցան քաղղեացիքն, զոր ոմանք զասորիս ասեն: Իսկ յետ այնորիկ անցեալ Իսրաել ընդ ծովն Կարմիր երբայնցիք կոչեցան, զի Երբայն անցիք լսի, մոռացան զեգիպտացիս և առին զերբայն և կամ այլ իմն լեզու նոր, որպէս վկայէ Դաւիթ. լեզու զոր ո՛չ գիտէր՝ լուսաւ Ուստի և Մովսէս, շնորհին Աստուծոյ, արար գիր նոցին՝ ի վերա նոր լեզուին, և նովին գրովն ետ Աստուած զտախտակս քարեղէնս, զոր ընթեռնուլ կարէին, և կամ թէ նոր շնորհել, որպէս զօրէնսն, այսպէս և գիրն» (15բ). «Եւ Կիրոսփս արար զգիրն յունաց, զոր ոմանք զԿազմոս ասեն, և ապա այլք ի յազգաց, զոր տեսեալ ի նոցանէ արարին իւրեանց գիր», սրանց թվում և հայերը (Նշ. 57—58)¹⁷, և այսպես յազգս և յազինս լինի յաւէժութիւն այսմ արհեստի» (Երզ. 91) և «Ժամանակաւ կրթեալ յարհեստս և յիմաստըս գիտութեան, ստեղծանեն ըստ ազգի և լեզուաց նշանագիրս յիւրաքանչիւր ժամանակս իմաստունքն ի նոսա» (Երզ. 92): Նրանց խնդիրն էր կամ «առողջապէս զգօրութիւն դրելոցն պահել, կամ զթիրեալսն և իբր հիւանդութեամբ տկարացեալսն քերելով և խտրութեամբ և դատողական քննութեամբ բժշկել» (Երզ. 100—101): Այս նպատակն էր հետապնդում և հայոց գիրը: Այստեղ նույնպես փորձեցին «զվերստին հնարս գտանելոյ յոմանց ի ձեռն գրաւորական տառից և քերականական արուեստիս ուղղել զթիրութիւն խաւից բանից և մասանց նորին կարգաւորութեանց, որ են անդամք բանականութեան» (Երզ. 94):

Գրի ստեղծման երրորդ կարեւոր հիմքը այս ամենը՝ բանականութիւնը, իմացութիւններն ու գիտութիւնը հասկանալի դարձնելն էր: Դրանց արտահայտման միջոցները՝ ձայնը, հնչյունը, լեզուն, հոգեւոր էին, վերացական ու անհասանելի մտքին (Երզ. 160). պետք էր մարմնավորել ու տեսանելի դարձնել իմացականը, անըմբռնելին, դժվարին: Եվ ծնվում է հնչյունի գրութեան, այսինքն՝ նրա շոշափելի պատկերը, նյութական օրինակն ստեղծելու գաղափարը, որ ներկայացվում է այսպես. «Ձանմարմին բանն բերելով և մարմին զգեցուցանելով» արարին գիր, «զի դիւրաւ ըմբռնեսցի այն, որ ոչն ըմբռնի» (Երզ. 93), կամ՝ «զայն որ ոչն ըմբռնի», «գիրըմբռնելի... արասցեն» (Նշ. 57): Ուստի, «գրողմեցին նախ ի վերայ տախտակի, և ապա՝ ի վերայ քարտիս, և ածեալ զանմարմինն ի մարմին, զգեցուցանեն նմա մարմին զգիր» (Երզ. 93), որ նյութական էր, տեսանելի, շոշափելի ու ըմբռնելի: Այսինքն՝ Մործորեցու ձեւակերպմամբ բանականութիւնը «գիրըմբռնելի և պիտանացու մարդկան արարին» (Մործ. 17ա): Այս նույն միտքը Դաւիթը ձեւակերպում է հետեւյալ կերպ. «Եւ զի՞ ասէ յաղագս տառի և բուն հարկանէ զգրոյ. քանզի տառդ անմարմին, իբր թէ բանի նշանակ, զի գիտելի կացուցանէ գրովն զբանն, որպէս այբիւն զայբն» (93)¹⁸. Վարդան Արեւելցին ավելի է պարզում միտքը. «...և գիր, զի զաննիւթն նիւթացոյց, որպէս ձայն բանանայ (խոսք է դառնում—Ա. Ս.) և բանն գրի ի քարտէզ և ի մագաղաթ: Գիր ո՛չ ընթերցական, այլ տեսական և գործական..., զի երկին և երկիր, որ իբրեւ զպնակիտս առաջի կա՛ն ընթեռնումք զայնոսիկ», այն մտավոր ընթերցանութիւն է, ընկալում, իսկ գրի դեպքում ընթեռնելը գործնական է, ո՛չ միայն տեսանելի, այլև շոշափելի ու կիրառելի (1267, 21ա—բ): «Այս անմարմին ձայնս, որ ի գրոյն տառ կոչի» մարմին է առնում՝ քերվում ու գծվում: Բոլոր ազգերն ու լեզուներն այս ճանապարհով ստեղծում են իրենց գիրը, որ «տարր և նիւթ է ամենայն խաւից» (Երզ. 160, 162): «Նիւթաւոր գծի» առաջին հեղինակներն են Ենովան ու Ենովքը (Երզ. 90):

Գրի ստեղծումն ունի և մի չորրորդ անհրաժեշտ պատճառ. մարդու մոռացկոտութիւնը: Այս մասին գրում են հետեւյալը. «Մովսէս, շնորհին Աստուծոյ, արար գիր..., և այն գրովն ետ Աստուած զտախտակսն, վասնզի մոռացկոտ է բնութիւն մարդկան, և ո՛չ կարեն առանց գրոյ պահել զիշատակս աստուածատուր իմաստիցն» (Երզ. 91): Այսինքն՝ մարդու բնութիւնն այնպիսին

17 Տե՛ս նաև Յովհաննէս Երզնկացի, էջ 91—92, Առաքել Սիւնեցի, էջ 70:

18 Տե՛ս նաև Ստեփաննոս Սիւնեցի, էջ 183—184, Գրիգոր Մագիստրոս, էջ 23բ—24ա:

է, որ չի կարող մտովին երկար պահպանել իմացական հարստութիւնը. այն պետք է որեւէ կերպ դարձնել մնայուն, հարկ եղած դեպքում նրան կրկին անդրադառնալու, վերհիշել, վերահիմաստավորել կարողանալու համար: Այս նպատակն է ունեցել, ինչպես տեսանք, գրի ստեղծումը հենց սկզբից ևեթ, Ծնովսի ու Ծնովքի ժամանակներից սկսած, երբ առաջին անգամ հիմք դրվեց գծի ձևին՝ նշանագրին: Նրանց նպատակն էր պահպանել «զկեանս վարուց առաջնոցն...», զի ամբողջ պահեսցին նշանակք անուանց և իրաց...» (Երզ. 89—90):

Հիմնավոր է գրի ստեղծման և հինգերորդ պատճառը՝ մարդու անցավորութիւնը: «Ընդ արուեստատիրն անցանելն բառնի և արուեստն», ուստի և «սկիզբն արարին գրոյ, որպէսզի յառաջակայսն զյիշատակն յերկարածեացէ» (Երզ. 98—99), ասում են քերականները¹⁹: Այսինքն՝ մարդը մոռացկիւտ լինելուց բացի, նաև անցավոր է. նա իր հետ տանում է այն ամենը, ինչ ձեռք է բերել կյանքի ընթացքում բանականութեան շնորհիւ: Մնացողները մոռանում են եղածը, իսկ զնացողներն իրենց հետ են տանում իմացածը. կորուստը դառնում է կրկնակի: Գիրն այս դեպքում ևս ստանում է անցյալի ու ներկայի արժեքները շաղկապելու, պահել-պահպանելու, գալիք սերունդներին փոխանցելու, հավերժացնելու գործընթացի արժեք: Գիրը պետք է, որպեսզի չդադարի մարդկային միտքը, նրա պատմութիւնը, բանականութեան հիշողութիւնն ու առաջընթացը:

Գիրն ունի և այլ՝ կիրառական ու հոգեբանական, կենցաղային ու գործնական նշանակութիւն: Բանական արարածն այլևս կարիք էր զգում կիսովի իր նմանների հետ՝ հաղորդակցվել ոչ միայն ուղղակի, անմիջական խոսքով ու ներկայութեամբ, այլև բացակայութեամբ՝ հեռավորութեան վրա, գործնական կամ անձնական հարկից ու պահանջներից ելնելով: Արևելցին գրում է. «Սովոր էին և զայս առնել մարդիկ. յորժամ մերձ իցեն՝ առանց միջնորդի խաւսել, և ի հեռանալն տեղեալ կամ ի սիրոյ՝ գրով և միջնորդաւ խաւսէին» (1267, 5ա):

* * *

Գրի ստեղծումը հայ իրականութեան մեջ ունի և մի այլ, շատ կարևոր ու առանձնահատուկ արժեք: Գիրը դառնում է ոչ միայն իմացութեան ու մշակութի, այլև հավատի պահպանութեան հիմք, որ նշանակում է նաև ազգի ու ժողովրդի ինքնապաշտպանութեան բաղկացուցիչ մաս, պայքարի միջոց, գոյատևման երաշխիք²⁰:

Պետականութեանից երկար ժամանակ զրկված ժողովուրդն, իրոք, կարողացավ հավատի ու գրի միջոցով իր գոյութիւնը պահել և այսօր էլ շարունակում է նույնն անել՝ Սփյուռքում:

Այսպիսով, ծնվում է գրի ստեղծման մի նոր, վեցերորդ անհրաժեշտութիւն: Նա դառնում է որեւէ ժողովրդի լեզվի, ազգային նկարագրի, մտքի, կյանքի ու կենցաղի՝ ինքնատիպութեան, որով և ինքնուրույնութեան արտահայտիչն ու պահպանիչը, այլև մաքառման ու գոյատևման հիմնական ու անփոխարինելի խարիսխը: Մեսրոպյան այբուբենն իր մեջ ունի հայ ժողովրդին ինքնահատուկ դրոշմ: Այս մասին մեկնիչներն ունեն փոքր-ինչ տարբեր. բայց ի վերջո՝ միևնույն հզորակացութեանը հանգեցնող տեսակետ: Այսպես, օրինակ, Վարդան Արևելցին, որ երկրորդն է Դավթից հետո անդրադառնում հայկական նշանագրերի շատութեանը, դրան տալիս է հետևյալ նուրբ մեկնաբանութիւնը. «Իսկ բազմութիւն հայկական գրոյս երկու պատճառս ունի. առաջինն՝ զազգացն զկործայսն է, այսինքն՝ զբազմութիւն հայոց լեզուիս, զծոռութիւնն և զթոթովախօսութիւնն գնչատացն: Երկրորդ պատճառն՝ լեզուիս հարստու-

¹⁹ Տե՛ս նաև Մործորկցի, էջ 18բ—19ա:

²⁰ Սա հառուկ ընդգծվածութեամբ շեշտում են Մազիստրոսը (48բ—49ա) և Երզնկացին (152—153):

թիւնն» (84): Դավիթը և հետագա քերականներից ոմանք, այն հարցին, թե «ընդէ՞ր բազմութիւն գրոյս, քան զայլոց ազգաց», պատասխանում են. «Մի, ղի անարուեստ խաւք և բարրարիկոն լեզու, և երկրորդ՝ վասն թաւութեան զնոյնս պարտ էր կարգել ի գիրն, որք ըստ խաւիցն յարմարին» (Ծրգ. 161)²¹: «Նախ, վասն հաճախութեան գրոյս մեր, որ ի թանձրութենէ լեզուիս և ի թաւ բառիցն եղև. և այս՝ զի միջերկրեայք եմք, սակս որոյ բազմաց կարաւտացան ալֆափետաց...», — ասում է Նշեցին (172): Առաքել Սյունեցին ավելացնում է. «Նախ՝ զի մեր լեզուս ընդարձակ է (հարուստ, ճոխ—Ա. Ս.), քան զայլ ամենայն ազգացն. ոմն լեզուի ծայրովն խաւսին, և ոմն՝ միջան, և ոմն՝ տակովն. իսկ մերս՝ տակովն և միջան և ծայրին: Վասն որոյ այլազգիքն, յորժամ ուսանին զմեր լեզուս, ոչ կարեն ուղղակի խաւսիլ, որպէս մեր: Իսկ մեր զամենեցուն խաւսիմք, որպէս նոքայն, զի կարող եմք խաւսել երբեմն թաւ, երբեմն՝ սոսկ, երկայն և սուղ, վասն որոյ կայ ի գիրս մեր երկայն և սուղ, թաւ և սոսկ: Եւ վասն այն է յոլով գիրս մեր» (99):

Ըստ էութեան, մեր մեկնիչները հայ գրի շատութիւնը կապում են նաև հայկական բարբառների շատութեան հետ: Այսպես, օրինակ, խոսելով «կործան» լեզվի մասին, Արեւելցի գործերիցն անվանում է «ծռալեզու», ներանց բառերը «թանձր և բարրարիկոն», որովհետև արտասանում են սեփական հնչյունափոխութեամբ: «...Գեամ, գեաս, գեայ ..., գոմ և յղոմ: Այս ծեքական բառս ըստ մթին լեզուաց, որով կործայքն խօսին, թիւրեալ սովորութեամբ, կամ պատահմամբ, զի փոխանակ գամ ասելոյն կեամ կամ գոմ ասեն, որպէս երկուական խոնարհումն՝ կոփում, կոփոս՝ ոչ է առաջնոցն, այլ վերջնոցն գիւտ, նոյնպէս և այլք» (Մործ. 66բ—67ա):

Այս լեզվի մասին գրում են և մյուս քերականները, նշելով, թե այն առաջացել է «ծեքելով ի հոմանուն լեզուէ ի խաւսս» (Դավիթ, 105, Նշեցի 108): Այս նշանաւորում է, թե հայ գրի բազմաքանակութիւնը ևս իր հերթին նպաստել է լեզվի քարկայանը, առատութեանն ու հարստութեանը: Դիտելով մեր լեզուս առատ է, զի մեր գիրն 36 է²²:

Քերականութեան մեկնիչները բարձր են գնահատում հայոց գրի հորինման գործն ու նրա հեղինակի սխրանքը, որպէս նրան տրված գերազույն շնորհ և արտոնութիւն: Մեսրոպ Մաշտոցի հրաշագործութիւնը նրանք հավասարազոր են դասում միմիայն հրեական այբուբեն հորինողի՝ Մովսէս Մարգարեի մեծագործութեան հետ, գրելով. «զի այլոց ազգաց Աստուած ոչ արար այնպէս, որպէս Իսրայէլի և մեզ» (Ծրգ. 92): Այսինքն, ինչպես որ «Մովսէս, շնորհին Աստուծոյ, արար գիր ի վերայ նոր լեզուին, և այն գրովն Աստուած հոտ զտախտակսն» (Ծրգն. 91, Մործ. 16 ա), այնպէս էլ «ի ձեռն արժանաւոր խնդրողաց շնորհեաց Աստուած զգրաւոր իմաստութիւնն Հայաստանեայց ազգի՝ յետ լուսնկալութեան Աւետարանին, ի ձեռն Սահակայ և Մեսրոպայ» (Ծրգ. 92, Մործ. 16 ա)²³:

Վարդան Արեւելցու խոսքն ավելի սուղ է, բայց և որոշակի. «Եւ այլքդ, ղի ունին, բայց այլ կերպիւ. մերն յԱստուծոյ ձեացաւ արինակն: Այս առանց կարծեաց է» (2544, 166 բ): Սա դեպի իր լեզուն ու իր գիրը հայ ժողովրդի ունեցած պաշտամունքի դրսևորումն է, որ արտահայտվում է հեղինակի մի այլ գործում ևս. «...զի յԱստուծոյ տուաւ գիր ազգիս, որպէս Մովսէսի Իսրայէլի: Եւ այլ ո՞ր ազգ պարծի այսու» (2544, 62 ա): «յԱստուծոյ և ի շնորհաց նորա երկու ազգ առին գիր՝ հրեայք և հայք» (2544, 164 բ):

Այս ամենից հետո զարմանալի չէ, որ Մեսրոպյան այբուբենը համարվեր աստծո տուրք, աստվածային աջով ստեղծված, աստվածային շնորհ և այլն: Այսպէս է գնահատվել գրի ստեղծումը մարդկային պատմութեան մեջ առհասարակ: Ձեռնովս ասեն արար գիր և զանուանս մասանց արարածոց...:

21 Տե՛ս նաև Մործորեցի, էջ 33 բ, Նշեցի, էջ 62:

22 Տե՛ս Վարդան Արեւելցի, էջ 93: Ծրգնկացի, էջ 251: Մործորեցի, էջ 69 ա: ԶԼԵՄ: Երեւան, էջ 153:

23 Տե՛ս նաև Նշեցի, էջ 58:

եւ զի զայս արար, ասեն՝ Աստուած կոչեցաւ Ենտլս և որդիք նորա՝ որդիք Աստուծոյ²⁴:

Առաջին գիրը ստեղծողներն, իրավամբ, Աստված կոչվեցին: Դրանց թրվում են Ենտլսը, Ենտլքը, Մովսեսը, Բոթթըր, Կադմոսը (կիսաստված) և մեր Մեծն Մաշտոցը:

ВОПРОСЫ ЯЗЫКА В ТРУДАХ АРМЯНСКИХ ГРАММАТИКОВ

Доктор филолог. наук А. Н. ЕРЗНКАЦИ-СРАПЯН

Резюме

Почти все армянские грамматики обращались к вопросам возникновения языка и письменности, отсчитывая время зарождения этого события с появления у человека разума. В статье рассматриваются вопросы разрушения основ праязыка или единого языка, причины возникновения различных языков и наречий, использования письменности как орудия познания и правильной речи, как средства спасения человечества от забвения и уничтожения, сохранения единства родного языка, а также вопрос важности знания иностранных языков. В толкованиях особое место отводится значению армянской письменности как незаменимого фактора существования нации и народа. Граматики видят корни многоязычия в самом процессе развития праязыка. Возникновение языков они считают чудесным рождением добра и красоты, а первых создателей письменности называют богами.

²⁴ Զեռ. № 1267, 36բ, 37բ. տե՛ս նաև 2544, 130բ, 166ա, Պատմ. տիեզր. էջ 11, 29, 30: